մեծութիւն է նախաժամանելոցն աւրինակ լինել առաքինութեան ապագայիցն, ոչինչ նրուազ ի գովութեան մերում բարեոյս հետևելոցն զկնի նորա գոլ գեղաղէշ գաղափար։ Արդ՝ զամենայն ասել զնորա և համեմատել՝ ոչ ոք ի ծայրագունիցն գերազանցէ զսա, և պատմութիւն և ոչ գովութեան ոճ։ Եւ կամ զկենցաղն յիշել. թէ յորո՞ց արհեստից և վայրից եկն յայս՝ որ է զարմացումն և ի վեր քան զհրաշ։

Քանզի ոչ ի տան կեցեալ և ոչ յանապատի սնեալ՝ առ միանձունս ընտակերս և չորաճաշակս, աղաւթակերս և պարկեշտախաւսս. այլ ի քաղաքս, յարկս թագաւորաց և ի դըրունս հզաւրաց.[1] անտ ուր յոլով են հաղբքն և քաղցրագոյն խանձն, ակամա և դիւրաւ ըմբռնումն, և անթիւ է նիւթ հրոյս. այսինքն՝ պատրիչ սգայութեանցն, տեսանելեացն ցանկալին, լսելեացն հեշտալին, ճաշակելեացն համադամն, ըռընկացն հոտոտումն, շաւշափելեացն կակղագոյնն. և ամենայն ինչ պատրաստ առ ի չարութիւն և մուտք ի մեզս։ Ուր և ողջախոհութիւնն է եղկելի, և բղջախոհութիւնն գովելի, պարկեշտութիւնն ծիծա-

---

1. Կոր. «եկեալ ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին . . .»։